

Վ. ՔՈՍՅԱՆ, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, ՀՍՄՀ
ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, 487 էջ

Բառակապակցությունը, որպես լեզվի (բառի) և խոսքի (նախադասության) միջև գտնվող իրողություն, ուսումնասիրման առումով որոշակիորեն լուրջ դժվարություններ է հարուցում: Բնկ դրան վերաբերող բազմաթիվ խնդիրներ ուսումնասիրվել են հայ լեզվաբանների կողմից, բայց մինչև վերջերս էլ խիստ զգացվում էր շարահյուսական այդ ինքնուրույն միավորի ամբողջական ու հիմնավոր ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այդ բացը վերացվում է Վ. Քոսյանի ներկա մենագրությամբ:

Աշխատության առաջին գլխում հիմնական գծերով ներկայացվում է բառերի կապակցության ուսման զարգացումը: Ավելի հանգամանորեն է ներկայացվում բառակապակցության ըմբռնումը սովետական լեզվաբանության մեջ, Ուսումնասիրության խնդիր մասին գոյություն ունեցող կարծիքները վերլուծելիս, որոնք հաճախ հակասական են և իրարամերձ, Վ. Քոսյանը ուշադրություն է պահում բառի և նախադասության հետ բառակապակցության առնչությունների խնդրը: Մերժելով գոյություն ունեցող ծայրահեղ կարծիքները, հեղինակը բառակապակցությունը որոշակիորեն սահմանազատում է և՛ բառից, և՛ նախադասությունից: Մասնավորապես վերջինիս հետ բառակապակցության ունեցած հարաբերությունը բացահայտելիս նա բավական բնորոշ գծերով է ներկայացնում բառակապակցության հիմնական առանձնահատկությունները, որպես այդպիսիք նշելով այն, որ դրան հատուկ չեն ստորոգումը, նախադասությանը բնորոշ հնչյունազգայնությունը, հաղորդման բնույթի հետ կապված հատկանիշները և այլն (էջ 29):

Ջարգացնելով այն տեսակետը, որ բառակապակցությունը կազմվում է միայն ստորադասական հարաբերությամբ՝ Վ. Քոսյանը մերժում է ոչ միայն այն մոտեցումը, ըստ որի բառակապակցությունները բաժանվում են ստորոգումային և ոչ ստորոգումային տեսակների, այլև ավելորդ է համարում բառակապակցությունների բաժանումը ըստ հարաբերության համադասական և ստորադասական բնույթի: Այսպիսի հիմնական սկզբունքով առաջնորդվելու շնորհիվ նա, բնականաբար, որպես բառակապակցություն չպիտի դիտեր ենթակայի ու ստորոգյալի, բացահայտիչի ու բացահայտյալի, բաղադրյալ ստորոգյալի և նրա լրացումների կապակցությունները:

Ընդգծելով, որ բառակապակցությունները կազմվում են լիմաստ խոսքի մասի իմաստային ընդարձակումով՝ հեղինակը հենց այդ հանգամանքն էլ դիտում է որպես դրանց տեսակները որոշելու հիմունք: Քանի որ հայերենում լրացումներ կարող են ունենալ գոյականը, բայը, ածականը, մակբայը և մասամբ էլ թվականն ու դերանունը, ըստ այդմ էլ Քոսյանը տարբերակում է գոյականի, բայի, ածականի, մակբայի, թվականի ու դերանվան բառակապակցություններ, նրան հետաքրքրել է նաև բառակապակցությունների ներտեսակային դասադասման հարցը, որի համար հիմք է ընդունել լրացումների խոսքիմասային հատկանիշը:

Աշխատության երկրորդ գլխում քննված են գոյականի կապակցությունները: Այստեղ գոյական լրացյալը դիտարկված է գոյականով, ածականով, թվականով, դերբայներով, ինչպես նաև մակբայով և կապով ու կապվող բառով արտահայտված լրացումների ոլորտում: Փաստական նյութի վերլուծությամբ են բնութագրվում մասնավորապես երկու գոյականներով կազմված կապակցությունները: Բնե արդի հայերենի հոլովների իմաստներին վերաբերող խնդիրները գրեթե միշտ գտնվել են մեր լեզվաբանների ուշադրության կենտրոնում, բայց այդ հանգամանքը չի խանգարել, որ գրախոսվող աշխատության հեղինակի խոսքը որոշակի գիտական հետաքրքրություն ներկայացնի: Եվ դա առաջին հերթին այն բանի շնորհիվ, որ նա ունի նյութի ուսումնասիրության ի՛ր դիտակետն ու նպատակադրումը: Դա արտահայտվում է առաջին հերթին հոլովների նոր իմաստների տարբերակումով, վաղուց բացահայտված իմաստներին վերաբերող փաստական նյութի ճշգրտումով և այլն:

Քանի որ տրական և հաջորդ թե՛ հոլովածներով լրացումները դերազանցապես առնչվում են բայական ծագում ունեցող գոյականների հետ, ուստի դրանց ուսումնասիրության ժամանակ հեղինակի ուշադրության կենտրոնում գտնվող հիմնական խնդիրը բայական և համապատասխան գոյականի բառակապակցությունների իմաստային ու շարահյուսական յուրահատկությունների բացահայտումն է եղել: Տարբեր խոսքի մասերով առանցքային ահռվածներ ունեցող այդ և նման բառակապակցությունների համեմատական ուսումնասիրությունը, իհարկե, չի նշանակում, թե հեղինակը անհետևողականություն է ցուցաբերում բառակապակցությունների սիպակլորման բերականական սկզբունքի գործադրման հարցում: Ընդհակառակը՝ դա նշանակում է, որ ինչպես այսպիսի, այնպես էլ հոմանշային արժեք ունեցող այլ կապակցությունների ուսումնասիրության ժամանակ նա դրանց դասակարգման ձևաբանական սկզբունքին միանգամայն հաջողությամբ է զուգակցում իմաստային գործոնը: Նման մոտեցման շնորհիվ է, որ բացահայտվում են բառակապակցությունների ոչ միայն ձևաբանական տարբերությունները, այլև իմաստային ընդհանրությունները, դրանց միասնականացման որոշակի միտումը: Սույն աշխատության արժանիքներից մեկն էլ պայմանավորվել է նրանով, որ ըստ անհրաժեշտության ցույց են տրված տարբեր տեսակի բառակապակցությունների ոլորտում դրսևորվող հոմանշությունների բավական հարուստ երևույթները:

Քննվող նյութի թելադրանքով պայմանավորված՝ եթե երկու գոյականներով կազմված կապակցությունների ուսումնասիրության դեպքում հիմնականը դրանց իմաստային բազմազան հարաբերությունների բացահայտումն էր, ապա ածական լրացումով բառակապակցությունների դեպքում կարևոր է դառնում ածականի իմաստային ընդգրկման հնարավորությունների բացահայտումը: Այս հոդի վրա էլ զբախտվող մենագրության մեջ զեղարվեստական խոսքի յուրահատկությունների հետազոտման բավական կարևոր տեղ է տրված:

Բավական դժվար է դերբայներով լրացում ունեցող կապակցությունների ուսումնասիրությունը հատկապես այն պատճառով, որ դերբայները գործառական-շարահյուսական և իմաստային առանձնահատկություններով հարաբերակից լինելով գոյականին, ածականին ու մականին, կարող էին ուղղակի անխուսափելի դարձնել ուսումնասիրության միօրինակությունը, կրկնությունը: Վ. Քոսյանին հիմնականում հաջողվել է իր աշխատությունը դերժ պահել նման անհրաժեշտ կրկնությունից հատկապես այն բանի շնորհիվ, որ աշխատության այս մասում հիմնական նպատակ է դարձրել դերբայական դարձվածների բնորոշ առանձնահատկությունների բացահայտումը: Այս կապակցությամբ անենք մի դիտողություն: Ինչպես որոշակիորեն զգացվում է, Վ. Քոսյանն ընդունում է այն տեսակետը, թե արդի հայերենում անորոշ դերբայի սեռական հոլովածը կարող է նաև հատկացուցիչ լինել (էջ 133): Բայց ի՞նչ տարբերություն, ասենք, հետևյալ բառակապակցությունների միջև՝ «Նա ուտելու ցանկությամբ չունեմ», «Մյուսը խոսելու իրավունք չունի», որ առաջինում անորոշ դերբայը որոշիչ է համարվել, իսկ երկրորդում՝ հատկացուցիչ: Անորոշ դերբայի սեռական հոլովը, որպես բոլոր դեպքերում հատկանիշ արտահայտող ձև, կարող է՝ միայն որոշիչ կարող է լինել:

Կարող ու կապվող բառով լրացում ունեցող գոյականի բառակապակցությունների ուսումնասիրությունը նպատակաուղղված է կապերի ու նրանց խնդիրների լրացական բազմազան հարաբերությունների բացահայտմանը: Այդ բավական կարևոր և դեռևս քիչ քննարկման առարկա դարձած խնդրի ուսումնասիրությունը հեղինակը կատարել է միանգամայն ճիշտ մոտեցումով՝ որպես հիմնական ելակետ ընդունելով կապերի ծագումը: Աշխատության այս բաժինը շահել է մասնավորապես այն բանի շնորհիվ, որ ածականից ծագած կապերի (նման, մոտ, առընթեր, հակառակ, համաձայն, համապատասխան, համեմատ և այլն)՝ գոյականին լրացումներ կապելու հնարավորությունները ներկայացված են բնագրային օրինակների բավական ընդարձակ վերլուծությամբ:

Ածականի, ինչպես նաև թվականի կապակցությունների ուսումնասիրության առնչությամբ հեղինակի տեսական հետաքրքրությունների շրջանակներում կրկին երևան է գալիս բառակապակցության և նախադասության ու բառի հարաբերության հարցը, և եզրակացությունները հիմնավորվում են ուշադրավ փաստերով: Երբեմն, սակայն, որոշ փաստերի արժեքավորումը բավական մեծ կատարված է կատարվում: Այսպես, օրինակ՝ խոսելով ածականով գերադաս անգամ ունեցող որոշ կապակցությունների մասին (ինչպես՝ «Ու մարդասպանը դուրս եկավ ձորից, Դեմքը այլալված, ֆայլվածք մզլաք»), դրանք մեկ դիտում է որպես «զերբայական դարձված հիշեցնող կազմություններ», մեկ՝ իբրև նախադասություն՝ առանց ստորոգման, իբրև նախադասության կմախք, որը ստորոգմամբ վերածվում է նախադասության (էջ 192): Եվ ապա նկատելով նաև, որ դժվար է դրանցում լրացում-լրացյալ կապակցություն

ընտրելը, վերջապես նախադասության կազմում դրանք դիտում է որպես նախադասության անդամին համընկնող կապակցություն:

Մենագրության ամենածավալուն բաժինը բայական կապակցությանն է վերաբերում:

Հարուստ են բայի լրացական հնարավորությունները: Որպես լրացում, դրան կարող էին վերաբերել բաղմամբով խոսքի մասերի պատկանող բառեր: Բայց, իրավամբ, սրանցից կազմված ոչ բոլոր տեսակի բառակապակցություններն են, որ հեղինակի կողմից դիտվել են իբրև բայական կապակցության ինքնուրույն տեսակ: Միանգամայն ճիշտ է վարվել Վ. Քոսյանը, որ ղերբայներով, ինչպես նաև անորոշ ղերբայների թեր հոլովածներով լրացում ունեցող բայական կապակցությունները, որոնք ունեն դոլական-բայ կապակցությունների յուրահատկությունները, առանձին չի ուսումնասիրել:

Դոլական լրացում ունեցող բայական կապակցությունների բաժինը անձանձիր աշխատանքի արդյունք է: Խնդրառու բայի և լրացում հանդիսացող դոլականի բառական ու քերականական հատկությունների հաշվառման հիման վրա ամենայն մանրամասնությամբ են ներկայացված հոլովական իմաստները, տարբեր տեսակի բայերի հետ հոլովածների ունեցած կապակցելիության աստիճանը և նույնիսկ այս կամ այն գրողի ստեղծագործություններում տեղ գտած շեղումներն ու հնացած ձևերը:

Ուսումնասիրության վերջին դիտում միանգամայն հաջող են քննված մակբայի բառակապակցությունները, որոնք բաժանված են երկու խմբի: Առաջինում քննվում են այն կապակցությունները, որոնք արտահայտում են մակբայի ցույց տված հատկանիշի համեմատության աստիճանները, իսկ երկրորդ խումբը կազմում են այլ խոսքի մասերի և մակբայի այնպիսի կապակցությունները, որոնք արտահայտում են այլ կարգի զանազան հարաբերություններ:

Գրախոսվող մենագրությունը, իհարկե, ունի նաև թերություններ, որոնց վերևում մասամբ անդրադարձանք: Բայց այդ բոլորով հանդերձ, այն որպես արդի հայերենի բառակապակցության առաջին ամրողական ու հանգամանալի նկարագրություն, լուրջ ներդրում է հայ քերականագիտության մեջ:

Հ. Մ. ԱՄԱՆՅԱՆ
Ս. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ